

Սուրբ Գրոց Սերտողություն : Դաս Թիւ 137

Հապա Հին Կտակարանի հաւատացեալները ի՞նչ – Եթէ Աստուծոյ թագաւորութիւնը եկաւ Քրիստոսի գալուստով հապա Հին Կտակարանի հաւատացեալները ի՞նչ: Արդեօ՞ք նրանք Աստուծոյ թագաւորութեան մասը չէին: Արդեօ՞ք Քրիստոսը նրանց թագաւորը չէր: Ինչպէս նկատուեց շնորհքի ուխտի դասընթացքում՝ որն Աստուած հաստատեց անկումից յետոյ, եւ որն յայտնաբերուեց մի շարք ուխտերում ի վերջոյ գազաթնակէտը հասնելով նոր ուխտում, թէպէտ ունենալով կառավարութեան ու կազմութեան տարբերութիւններ, սակայն ունի էական միութիւն եւ շարունակութիւն այդ բոլոր ուխտերի միջեւ: Նոր ուխտը՝ թէկուզ խօսուել էր որպէս Աստուծոյ մի նոր գործ, սակայն այդ չէր նշանակում մի բան ամբողջովին կամ բացարձակապէս նոր, որը երբեք չէր տեղի ունեցել անցեալում. փոխարէն Աստուածաշունչը բացատրում է թէ Աստուծոյ այդ գործը կ'իյնէր նոր այդ իմաստով որ այն կ'իյնէր Իր անցեալում կատարուած գործից շատ ատելի մեծ ծաւալով ու արդիւնքով, մի շատ ատելի փառաւոր ուխտ:

Ճիշտ այնպէս որ նոր ուխտը իրականում հաստատուեց Քրիստոսի գալուստով եւ գործով ու ոչ նախքան այդ (Եբրայեցիս 9:15, 10:9, 12:24), այնպէս էլ Աստուծոյ թագաւորութիւնը հաստատուեց Քրիստոսի գալուստով ու ոչ նախքան այդ: Խոստացեալ Մեսիայ Թագաւորը պիտի յայտնուէր՝ որպէս Աստուած-մարդը, բնակելու մարդկանց մէջ, հռչակելու երկրի վրայ եղած Աստուծոյ տիրապետութեան նոր կարգի գալուստը, դուրս բերելով Իր ժողովրդին գերութիւնից մի նոր ելքով, եւ սկսելով Իր թագաւորութիւնը: Ուրեմն այս իմաստով Աստուծոյ թագաւորութիւնը մի իւրայատուկ Նոր Կտակարանի իրականութիւն է: Սակայն, սահմանելով Աստուծոյ թագաւորութիւնը որպէս օրհնութեան այդ յատուկ եւ եզակի տեղը ուր ժողովուրդը յօժարութեամբ եւ ցնծութեամբ դաւանում են Աստուծուն եւ հպատակուում են Նրա տիրապետութեան, այդ առմամբ կարող ենք ասել թէ Աստուծոյ այդ թագաւորութիւնը գոյութիւն է ունեցել երկրի վրայ մարդու անկումից ի վեր: Թէպէտ մենք յաճախ ակնարկում ենք Նոր Կտակարանի եկեղեցին իբրեւ Աստուծոյ եկեղեցին, սակայն իրականում Աստուծոյ եկեղեցին այնքան հին է որքան Ադամն ու Եւան: Կայ եւ միշտ եղել է Աստուծոյ մէկ շարունակական ուխտական ժողովուրդը՝ Աստուծոյ ճշմարիտ եկեղեցին կամ Իսրայէլը, թէ Հին եւ թէ Նոր Կտակարանների ընթացքում (Հռովմայեցիս 2:28-29, 9:6-8, 11:17-20, Գաղատացիս 3:7-9, 29, 6:16):

Թէպէտ Յիսուսը Իր աստուծային բնութեամբ, որպէս յաւիտեան Աստուծոյ Որդին, տիրեց Հին Կտակարանի հաւատացեալների թագաւորութեան վրայ, սակայն այս թագաւորութիւնը ընծայեց Նրան պաշտօնապէս եւ հրապարակայինօրէն որպէս Աստուած-մարդը Իր համբարձումին (Գործք Առաքելոց 2:29-36, Փիլիպպեցիս 2:5-11): Կատարելով Իր գործը որպէս Վերջին Ադամը, Յիսուսը ստացաւ ըստ Իր մարդկութեան այն ինչ որ Նա միշտ ունեցել էր ըստ Իր աստուծութեան: Ինչպէս Հին Կտակարանի հաւատացեալներ Աստուծով փրկուեցին հիմնաւած Քրիստոսի գործի վրայ, որն դեռեւս մի ապագայ գործ էր, ուրեմն դրա շնորհիւ նրանք նաեւ պատկանում էին Աստուծոյ եկեղեցուն կամ թագաւորութեան, նոյնիսկ թէպէտ այդ թագաւորութեան նոր հանգրուանը դեռեւս պիտի գար: Այլ բան ասելով ստեղծում ենք մի հիմնական խտրութիւն կամ բաժանում Աստուծոյ ժողովրդի միջեւ:

Չօրաց թագաւորութիւն – Բացի Իր շնորհաց թագաւորութիւնը, Քրիստոս ունի մի զօրաց թագաւորութիւն, ուր բարձրացած Աստուծոյ աջ կողմը, եւ բոլոր զօրութիւն եւ իշխանութիւն յանձնուած Նրան, Յիսուսը տիրում եւ ղեկավարում է բոլոր տիեզերքի վրայ Իր եկեղեցու շահի համար (Մատթէոս 11:27, 28:18, Ա. Կորնթացիս 15:27, Եփեսացիս 1:20-23): Այս չի ակնարկում Քրիստոսի աստուծային բնութեան՝ Երրորդութեան երկրորդ անձնաւորութիւնը, յաւիտեան Լոգոսը նախքան մարդեղութեան (Յովհաննէս 1:1). իսկ այս ակնարկում է մարդեղացած Յիսուս Քրիստոսին՝ Աստուած-մարդուն, որը Իր յարութեան շնորհիւ դարձել է տիեզերքի Տէրը՝ որին Նա ստեղծեց եւ միշտ պահպանել է, բայց որին Նա այժմ վերապահում է որպէս Աստուած-մարդը (Եբրայեցիս 1:1-4):

Քրիստոսի զօրաց թագաւորութիւնը ենթակայ է Իր շնորհաց թագաւորութեան, ուր Քրիստոսը նախախնամութեամբ ղեկավարում է ամեն բաներ՝ լինի թէ հրեշտակներ, դէտեր, հաւատացեալներ, անհաւատներ, ազգեր, զօրութիւններ, եղելութիւններ եւ գործողութիւններ. ուղղելով դրանց որպէս Իր միջոցներ ու գործիքներ, որպէսզի ծառայեն եւ յառաջացնեն Իր նպատակները Իր եկեղեցու շահի կամ բարիքի համար՝ ինչպէս Իր եկեղեցու պաշտպանութիւնը բոլոր չար զօրութիւնների դէմ, Իր եկեղեցու շնորհիւնը եւ աճումը, եւ Իր բոլոր ժողովրդի յառաջադիմական սրբագործութիւնը եւ վերջնական փառաւորումը: Քրիստոսը նոյնիսկ հիմա տիրում է զօրութեամբ տիեզերքի վրայ, եւ այս կ'շարունակի մինչեւ եկեղեցու համար եղած Իր փրկանաւորութեան ծրագիրը կատարելագործի, եւ բոլոր Իր թշնամիները յաղթեն (Մաղմոս 110:1, 2:8-12, Ա. Կորնթացիս 15:25), ներառեալ մահը (Ա. Կորնթացիս 15:26), եւ Իր թագաւորութիւնը կատարելագործի: Աստուած-մարդը ապա կ'յանձնի Իրեն ընծայուած միջնորդական զօրաց թագաւորութիւնը Իր Հօրը, եւ Ինքն կ'հնազանդի (կենթարկի) Նրան որպէսզի «Աստուած լինի ամենը ամենում»: Քրիստոսի երկրորդ գալուստը այսպիսով կ'նշի ամբողջ տիեզերքի վրայ եղած Իր միջնորդական (մեսիական) տիրապետութեան կատարելագործումը, ոչ սկիզբը (Ա. Կորնթացիս 15:24, 28):